

Հիվանդանոցային հաշիվների բողոքարկման ծրագիր

Եթե դուք ապահովագրված չեք (ինքնուրույն եք վճարում) կամ թերապահովագրված եք (բարձր բժշկական ծախսեր ունեք) **ԵՎ** ձեր ընտանիքի եկամուտը դաշնային աղքատության մակարդակի 400 տոկոս կամ դրանից ցածր է, կարող եք ֆինանսական օգնություն ստանալ ձեր հիվանդանոցային հաշվի համար: (**Ծանուցում.** Որոշ հիվանդանոցներ գեղչեր են առաջարկում ավելի բարձր եկամուտ ունեցող հիվանդներին:)

Հիվանդանոցային հաշիվների բողոքարկման ծրագիրը քննում է հիվանդների բողոքները հիվանդանոցային ֆինանսական օգնության ծրագրերի և այդ ծրագրերին առնչվող պարտքերի գանձման գործողությունների վերաբերյալ:

Դուք կարող եք բողոք ներկայացնել, եթե՝

- Դուք դիմել եք ֆինանսական օգնության համար, բայց մերում եք ստացել:
- Ձեզ երբեք չեն տեղեկացրել ֆինանսական օգնության ծրագրի մասին:
- Ձեր հաշիվն ուղարկվել է հավաքագրման, բայց ֆինանսական օգնության կարիք ունեք:

Ո՞ր հիվանդանոցներն են ներառված:

Կալիֆորնիայի Հանրային առողջապահության վարչության կողմից լիցենզավորված հիվանդանոցներ, բացառությամբ Պետքարտուղարության հիվանդանոցների, Չարգացման ծառայությունների վարչության կամ Ուղղիչ և վերականգնողական վարչության կողմից շահագործվող հիվանդանոցների:

Ի՞նչ խնդիրներ չեն ապահովագրվում:

Հիվանդանոցային հաշիվների բողոքարկման ծրագիրը **չի կառող** օգնել հետևյալի հետ կապված.

- Ընդհանուր հաշվարկային վեճեր (օրինակ՝ սխալ ծառայությունների գանձում, սխալ հաշիվ և այլն):
- Գնի նախնական հաշվարկներ կամ գնանշումներ:
- Հիվանդանոցների միջև գների տարբերություններ:
- Առողջապահական ծրագրի վճարման և ծախսաբաժնի հետ կապված խնդիրներ:
- Շտապօգնության բժշկի կամ մատակարարի կողմից ներկայացված հաշիվ (բացի հաստատության վճարներից):
- Ստացված խնամքի որակի հետ կապված խնդիրներ:

Ինչպե՞ս կարող եմ բողոք ներկայացնել:



Առցանց. Բողոքները կարող են ներկայացվել առցանց՝ անգլերեն և իսպաներեն լեզուներով՝ հետևյալ հասցեով. hcai.ca.gov/HospitalBillHelp:



Փոստով՝ Հիվանդի բողոքարկման ձևը հասանելի է առցանց՝ hcai.ca.gov/HospitalBillHelp 20 տարբեր լեզուներով: Այն կարող է տպվել և ուղարկվել հետևյալ հասցեով՝ Department of Health Care Access and Information, Hospital Bill Complaint Program, 2020 West El Camino Avenue, Suite 1101, Sacramento, CA 95833:

Ուրիշ որտե՞ղ կարող եմ օգնություն ստանալ:

- Առողջապահության սպառողների դաշինքն անվճար սպառողների իրավունքների պաշտպանության կազմակերպություն է, որը կարող է օգնել ձեզ հասկանալ հիվանդանոցային հաշիվները և վճարման գործընթացը և կարող է օգնել ձեզ դիմել ֆինանսական օգնության կամ բողոք ներկայացնել: Ավելի շատ տեղեկությունների համար զանգահարեք Առողջապահության սպառողների դաշինքին՝ 888-804-3536 հեռախոսահամարով կամ այցելեք healthconsumer.org կայքը:

Դուք կարող եք իրավասու լինել Medi-Cal ապահովագրության համար: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք գտնել ձեր վարչաշրջանի Medi-Cal գրասենյակը հետևյալ հղումով՝ <https://www.dhcs.ca.gov/Medi-Cal/Pages/county-office.aspx> կամ զանգահարել Medi-Cal-ի օգնության գծին՝ 800-541-5555 հեռախոսահամարով: